

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆրք 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրք 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ



Գրութիւնք եւ չին
տրուիր:

Հարցէ

DIRAN PAPAŽIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN


BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Երբ կ'ուզեմք «Հայելի»-ին մէջ աղոյր երեւնալ,

Պատճիք սիրուն եւ ազնիւ դեմք մը ունենալ:

Յիսուսակն արդարոց օրհնութեամբ եղիցի



ՄԱՅԱԳՈՅԺ

ՕՐԻՈՐԴ ՔԱԹԷՐԻՆ ՖՐԱՅԶԷՐԻ

Պոլսէն առնուած հայաթները կը գումարեն Վանայ մէջ Օրիորդ Ֆրայզէրի մահը: Իր անունը կը բաւէ ամեն հայ սրտերը 'ի խոր խոցելու և անհուն վիշտ պատճառելու: Օրիորդ Ֆրայզէր բարութեան եւ ազնուութեան մարմնացումն էր. նա կատարեալ պահապան հրեշտակ մը եղաւ 'ի Պուլկարիա ապաստանող խեղճ գաղթականութեան ու կատարեց իր պարտականութիւնը Քրիստոնէական ճշմարիտ համբերատարութեամբ մը, իր դէմ սարքուած նախատինքներու ու արհամարհանքներու իսկ տոկալով:

Օրիորդ Ֆրայզէր չի գոհանալով

Պուլկարիոյ մէջ ըրած բարեգործութիւններէն, կերթայ կը մտնէ Հայաստանի խորը, Վան, որբերու և այրիներու մէջ, կը հոգայ, կը մխիթարէ ու կը սրբէ անոնց ալ արցունքները 'ի բարեգործութեան բարձր գագաթնակետին վերայ կը գտնէ իր հրեշտակային մահը:

Ինչ որ ալ գրենք, շատ քիչ պիտի ըլլայ իր արժանիքը հրապարակելու և տնունը անմահացնելու համար:

Խորին յարգանք եւ պատկառանք իւր յիշատակին:

Ի յիշատակ ողբացեալ հանգուցելոյն, վաղը տեղւոյս Ս. Եկեղեցւոյն մէջ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, որուն ներկայ գտնուիլ հրաւիրուած է Անգղիական Վսեմ. Հիւպատոսը:

ԱԶԳԱՅԻՆ

ՆԱԽ ՊԻՏՃԷ ԵՒ ՅԵՏՈՅ ԾՐԱԳԻՐ

Անցեալ շաբթուան «Հայելի»-ի մէջ տեսանք Տիար Գիւմկեան «Անհրաժեշտ պէտք մը» խորագրով յօդուածը:

Արդոյ յօդուածագիրը Պուլկարիայ վարժարաններու յետադիմութեան պատճառ կը գտնէր վարժարաններէ ընդհանուր ծը-

րագրի մը պակասութիւնը : Մենք չուրանալով
անոր գաղափարին ճշգրտութիւնը , մեր կար-
ծիքով , այդ ծրագիրներէն աւելի անհրաժեշտ
կը գտնենք վարժարաններու պիւտճէն . ու-
րովհետեւ առանց կանոնաւոր պիւտճէի , ան-
կարելի է ծրագիրը գործադրել :

Ռուսաստանի և Տաճկաստանի հայ վար-
ժարանք անշարժ կալուածներ ունին , ինչ որ
Պուլկարահայ վարժարանք չունին կամ ե-
ղածներն ալ շատ աննշան բաներ են , որոնք
չեն կրնար նշանակելի գումար մը արտադրե-
լով պիւտճէները հաւասարակշռել : Հոգաբար-
ձութիւնք պարտաւորուած են տղոց ամսա-
կաններէ ու բանկայէն սպասել վարժարանին
հասցիքը . ասոնք՝ վարժարաններու բացման
ատեն ի նիստ գումարելով կը պատրաստեն
ենթադրական պիւտճէ մը ու գործի կըսկսին .
բայց քանի մը ամիս վերջը գործերու անյա-
ջողութենէն բանկային ու տղոց բերելիք ամ-
սականները քիչնալուն պէս՝ պիւտճէն կը կա-
ղայ . ուսուցիչները կանոնաւոր ամսական չեն
ստանար ու վարժարանին ծրագիրը չենքով
շնորհքով չի գործադրուիր :

Պատճառներէն մին ալ սա է որ , հա-
րուստ ու բարեկեցիկ դասակարգը իր զաւա-
կը մասնաւոր կամ պետական վարժարաննե-
րը գնելով , ձեռնպահ կը գտնուի ազգային
վարժարանին նպաստելէ , որով վարժարանը
մեծ մասամբ անթոշակ կամ քիչ բան վճա-
րող աշակերտներով կը մնայ , եւ Հոգաբար-
ձութիւնը շատ անգամ կը պարտաւորի ներ-
քին փոխառութեամբ իր պիւտճէն հաւասա-
րակշռել մինչեւ տարեգլուխ : Յաջորդ տարին,
նախորդին պարտքէն ազատելու համար կը
պարտաւորի պիւտճէն պզտիկցունել , որով
ծրագրի պահանջածին համաձայն դաստաու-
ներ պահել անկարելի ըլլալով , վարժարանի
շրջանը այնչափ գոհացուցիչ չի ըզլորիր :
Իսկ եթէ վարժարանները հաստատուն եկա-
մուտներ ունենան , գէթ ամսական պիւտ-
ճէին կէսը մատակարարող , այն ատեն գոր-
ծը մասամբ ապահովուած կըլլայ ու վարժա-
րանն ալ կ'ազատի դրամական հոգերէ :
Ուստի , փորձառութեամբ կ'առաջարկենք որ
ծրագիրէ աւելի պէտք է նիւթական ապահո-
վութեան մէջ գնել մեր վարժարանները .
Ռուսիոյ և Տաճկաստանի մէջ եղածին պէս
բարերարներ գտնելով կամ ընդհանուր հան-
գանակութիւններ ընելով վարժարանները
հաստատուն եկամուտներով օժտելու է . ա-

ռանց ասոր , մենք չպիտի կրնանք կանոնաւոր
վարժարաններ ունենալ եւ լաւ ծրագիրներ
գործադրել :

ԻՐԱԶԵՅ

(Գոհութեամբ կը ծանուցանենք թէ ,
Տ. յոյուածագրին դադարաւորները պիտի ի-
րականանան Շուվարի համար , որ մէկ երկու
տարիէն պիտի ունենայ կանոնաւոր եկամուտ
մը 'ի քէօսթէնճէ , իր վարժարանները հա-
տատուն կ'ուանի մը վրայ գնելու համար) :

Ծ. Խմբ .

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգ. վարժարանիս շինութենէն մնացորդ
2227 լէվ պարտքին (բացի գատարանական
ծախքերէ) վերջնականապէս գանձման Ահմէտ
Պիճան էֆէնտի գատարանի միջոցաւ Տիպէք
չէշմէի դէմ գտնուած ազգ. գետինը մեքսի-
թՅՕ ըրած է և ի մօտոյ աճուրդի հանելով
ըստ օրէնի ծախել պիտի տայ :

Ազգ. այս սեպհականութիւնն 'ի զուր
ձեռքէ չի հանելու և այս դպրն գումարի մը
համար օտարներու առջև ամօթով չի մնա-
լու նպատակով յանձնախումբ մը կազմուած
է որ յառաջիկայ շարժու հանգանակութեան
պիտի ձեռնարկէ :

Ուստի կը խնդրուի յարգւոյ ազգային-
ներէ որ հաճին իրենց սրտէն բղխած գու-
մարը նուիրել յանուն Ազգ. արժանապատու-
ութեան :

Մնամ ազօթաբար

Նախագահ Կանանխումբի
Սարգիս Բնյ. Ասրիպեան

ԱԶԴ

Այլկանց Կրթարանի Խնամակալու-
թիւնը ներկայիւս կը յայտարարէ թէ,
Կրթարանի ուսանողաց տարեկան վիճա-
կացոյցերու բաշխման հանդէսը տեղի
պիտի ունենայ յառաջիկայ երկուշաբ-
թի , 26 յուլիս . Հաճի Բանաթօյի դիմաց
«Կրօզսի» շքօսարանին մէջ . կէս օրէն
ետքը ժամը 2 ին :

Ֆիլոմէնա Ասկէրեան անունով
հայուհի մը կը փնտռուի ժառանգական
կարեւոր խնդրոյ մը համար . դիմել
խմբագրութեան :

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Պուլկարիոյ առուստրոյ

1898ին Պուլկարիոյ ներածութիւնները եղած են 72,730,250 ֆր. և արտածութիւնները 66,537,800 ֆր: 1897ին հետ բաղդատելով ներածութիւնները, 11,263,496 ֆր. պակսած և արտածութիւնները 6,746,496 ֆր. աւելցած են:

Արաբկիրի առաջ. տեղապահ Մուշեղ վարդապետի դիմումներուն վրայ, Խարբերդի միսիօնարներէն Վեր. Տօթթ. Կէյթսի կողմէ 300 ոսկի նպաստի գումար մը յանձնուեցաւ նոր կազմուած Յանձնաժողովի մը, որ Ակնայ մէջ ամենէն աւելի կարօտ ազգայիններուն տընակներ պիտի շինէ:

— Խառն ժողովը որոշեց Ակնայ Մայր եկեղեցւոյ մաս մը արծաթեղէնները (20 օխայի մօտ) ծախել տալ և եկեղեցւոյ իբր կալուած 10—15 տուններ շինել, աշքաա ընտանիքներու ճրի բընակութեան համար:

— Սանասարեան վարժարանի խնամակալութիւնը որոշեց յառաջիկայ 1899 1900 տարեշրջանին 10—13 ձրիավարժ որդեր ևս ընդունիլ ի վարժարան:

— Լիագաթի ոսկի շքագրամ տրուեցաւ Մեծ. Տօթթ. Խօրասանճեանի, և Իւլայի Ա. աստիճան Տօթթ. Նազաշեանի:

— Այս տարի Գէորգեան Ղեմարանէն 12 շրջանաւարտներ ելած են, որոնց 2ը ընդունուած են արդէն Մայր Աթոռի Միաբանութեան մէջ, մնացածներն ալ պատրաստ են հոգեւոր կոչում ընդունելու:

— Արմաշի Դպրեվանքի Ի. դասարանի աշակերտներէն 10ը՝ առանց կուսակրօնութիւնն ընդունելու ելած են վարժարանէն, իրենց ծննդավայրերը երթալով մեծ մասամբ ուսուցչութիւն ընելու:

— Տոհմային դրականութեան և դաստիարակութեան բազմամեայ մշակ Տիար Մատթէոս Մամուրեանի յիսնամեայ յոբելեանը պիտի կատարուի յառաջիկայ Հոկտ. 19 կիրակի օրը, Զմիւռնիոյ մէջ:

— Վաղը, կիրակի, տեղւոյս Ս. Եկեղեցւոյն մէջ երաժշտապետ Տիար Յակոբ Վարդապետեանի նախաձեռնութեամբ կազմուած նոր Իպրաց դասուն միջոցաւ Ս. Պատարագի արարողութիւնը եռաձայն եղանակաւ պիտի կատարուի:

Երեքշաբթի օրը Վառնայի երիաստարդութիւնը ցաւալի կորուստ մը ունեցաւ յանձին Տիար Յարութիւն Սիւքիասեանի, ժընէվի համալսարանէն վերականգնող դեղագործ, որ քառամեայ տաժանելի հիւանդութենէ մը ետքը իր մահկանացուն կնքեց, ի խոր սուգ համակելով իր ծնողքը, եղբարքը, քոյրերը ու մանրիմները: Յուզարկաւորութեան տխուր հանդէսը կատարուեցաւ նոյն օրը ի ներկայութեան խումբ բաղմութեան, որոյ հետ մենք ևս մեր ցաւակցութիւնը կը յայտնենք:

Փիլիպէէն անցեալ ուրբաթ օրուան թրակահանով կը գրեն:

Երէկ սոսկալի փոթորիկ մը ծագեցաւ: Մէկ վայրկենի մէջ փողոցները հեղեղներով ծածկուած էին: Զուրբըր տուններէն ներս կը խուժէին ստորնայարկերէն ու պատուհաններէն որոնց ապակիները կոտրած էին՝ ընկող խոշորութեամբ կարկուտէ: Ծառերու տերեւները ու կեղևները թափած էին: Թռչունները գետինը կիչնային. կազի լապտերները կոտրած ու տապալած էին: Երկաթուղիի կայարանին մէջ տեսարանը ամենէն աւելի սոսկալի էր: Բոլոր ապակիները կոտրած էին և գրասենեակները ողողուած: Վազոնները չուվաններով կապեցին: Նոյնը պատահեցաւ նաև մաքսատան մէջ: Բանջարեղենի բոլոր պարտէզները բնաջինջ եղան: Կարկուտը այնչափ առատ կը տեղար որ գետինը տասը հարիւրամէթը սառոյցով ծածկուած էր: Այսօր ամէն ոք նորոգութեան սկսած է. ապակեվաճառները մէծ գործի վրայ են: Թաթար Բազարճըգի կողմը և Ռօսօք լեռներէն մինչև երկաթուղիի գիծը փոթորիկը մեծ աւերումներ գործած է: Կըսուի թէ մինչև հիմա այս տեսակ սաստիկ փոթորիկ մը տեսնուած չէր:

ԵՐԿԱՄԵԱՅ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԱՒՍՏԻՍԱԼԵԱՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ

ՄՈՒՏԻ	Տօրաւ	ԵԼՔ	Տօրաւ
Անստորագիր կամաւոր նուէրներէ 10.000 տօրաւ, որուն 6.000ը կէս ճամբան մնալով, սնտուկը մը տած է	4,000	Յայտարարութիւններու ծախք 100 շ. իսկ արձանագրեալ	1,200
Ստորագրեալ ընկալագիրներէ 20.000 ճ. որոնց բոյներուն վրայ սխալմամբ 6.000 ճ.ի պակաս նշանակուած է	14,000	Շրջակայ ենթագրական կազմակերպութիւններու համար	6,000
Այլեայլ մասնաճիւղերէ հաւաքուած 30.000 ճ. իսկ ի սնտուկն	10,000	Կոչերու, պօշերու, ընկալագիրներու, թուղթի և պահարարանի 500 շ. արձանագրեալ	1,200
Աղքատի, Հացակարօտի, Ուրբերու և Վարժարանի նպաստ է ըսելով տրուած ներկայացումներէ 50 հազար ճ. որուն կէսը՝ ճամբան փորձանքի հանդիպելով, մը նացորդը մազապուր ինքզինքը նետած է ի սնտուկ	25,000	Բաւթաի, Հոագրի և Թէլէֆօնի համար 800 շ. արձանագրած	1,600
Գործիչներու ձեռքով հանգանակութիւն 100.000 ճ. իսկ անջնաս սնտուկին յանձնուած	25,000	Գործիչներու համար գանձապետի ձեռքով եղած ծախք	100,000
Օժանդակ անձնաւորութիւններէ 10,000 ճ. այս գումարը ստորագրութեան տակ հաւաքուելուն, առանց փորձանքի մը տնելու է ի սնտուկ	10,000	Լեռը պառկող զինուորին համար	10,000
Սպանալիքով հաւաքուած 20,000 ճ. որուն կէսը գրպանի մէջ մոռցուած է	10,000	Անթութեանէ մեռնող քաջերուն	10,400
Փոխառութիւն (*)	46,410	Ուսումը 200 ատրճանակները 2000ի կլլեցնելով նշանակեալ ծախք	14,000
Գումար ընդհանուր մօտից	144,410	Օտարական հիւրերու համար խիստ խնայողութեամբ եղած երկու տարուան մանր մունր ծախքեր	10
		Գումար ընդհանուր ելից	144,410

(*) Ազգեցիկ գործիչներէ մէկուն միջոցաւ մէկ քանի միամիտ հարուստներէ նոյն գործիչին անուանը 46,410 տօրաւի փոխառութիւն եղած է, ու յետոյ նոյն գործիչին օձիբը ազատելու համար՝ անոր իբր խաչագող արտաքսուած ըլլալը յայտարարուած է:

Վասն ճշդութեան հաշոյն կը ստորագրենք,

Հաշուակալ

Դանձապէս

ՕԺԱՆԴԱԿ ԽԸՎԲԶՎԵԱՆ

ԲՕՐԲՄԷՆ ԳՐՊԱՆԵԱՆ

Տեսրակներուն յար եւ նման ըրալը կը վկայենք,

Քննիչ:

ՀՈԳՈՑ ՎԱՍՆ Ի ՎԵՐՈՒՍՏԵԱՆ

ԱՄԵՆԱԿՈՒԼ ԵՌՏՕՎԻԶԵԱՆ

Կը հաստատենք

ՊԱԼ—ԹՈՒԹԱՆ ԲԱՐՄԱՂԸՆԸ—ԵԱԼԱՐԵԱՆ

ԼՅՆՈՅՆ

ԼԱՊՏԵՐՈՎ ԿԸ ՓՆՏՈՒԻՆ

Բաղդադի զինվորներու ձեռքը զոհ չեղող
գաւառացի ազգայիններ .

Աս մէկ երկու տարուան մէջ տղայաց փի-
լիսոփայի չափ բան չի սորվեցնող ուսուցիչներ .

Պուլկարահայ վարժարաններէն շրջանա-
ւարտ ելած գտնէ մէկ երկու աշակերտներ .

Իրենց վիճակէն գոհ ըլլալով՝ «փառք
քեզ Աստուած» մը ըսող խանութպաններ .

Թերթի մը պարունակութեանը մասին
անտեղի դիտողութիւն չընող ձրիաճարակ ըն-
թերցողներ .

Լահէի դեսպանատնի հուրդէն բան մը
հասկցողներ .

Սովետներու նպաստող Ռուսմահայ
հարուստներ .

Իրենց նախորդին պաշտօնավարութեանը
հանդիմանող ուսուցիչներ .

Ժողովուրդին մէջ ըրած խաչագողու-
թիւններնուն փոխարէն պատժուողներ .

Գործաւորներու երեսէն չի հարստացած
Փապոխքաժողովներ .

Մօտայի հաւիքս չունեցող մատմաշէշներ .

Թրախոման հատցունելէ ետքը խորշո-
թի չունեցող ամուսիններ .

Տարիներով դպրոց երթալէ ետքը շէնք
չնսրճէ ձեռք ու կար գիտցող շրջանաւարտու-
հներ .

Ժողովուրդի բարեսրտութենէն չօգտուող
կեղծ ազգասէրներ .

Ինքզինքնին իրենց կոչմանը հաւատա-
րիմ ցուցնելով, ազգին դրամը ուտելէ ետքը
ապերախտ չի գտնուողներ .

Խօսք տուած օրերնին ասպարուածները
յանձնող գերձակներ ու կոշկակարներ .

Տարուան մէջ սորվածնին երկու ամսու-
ան արձակուրդի միջոցին չի մօռցող ուսա-
նողներ .

Մինակ աղօթելու համար եկեղեցի գա-
ցող տիկիներ .

Ծխախոտը ձգեցի ըսելով ծխախոտ չի
գնող, բայց անկէ ասկէ ծխախոտ մուրալուն
վերջը բերող կահուղ երես թիրեալիներ՝
ԼԱՊՏԵՐՈՎ ԿԸ ՓՆՏՈՒԻՆ :

ՄԱՏԻՏԻ ՀԱՐՈՒԱԾ



Հետեւելը Փ Պոլսէն զրկուած է
մեզ, հրատարակելու խնդրանքով .

ՏԻԿԻՆ ԱԶՆՈՒԱՇՈՒՔՈՒՀԻՆ

Տեսարանն է մօտիկի մը խանութը,
ուր աշուղտաշուքի հովիւր առած տիկին
մը կը մտնէ :

— Այո՛ շաբթուան Լա Մօս նաւի-
նալը ունի՞ք :

— Ունինք տիկին, կը պատասխանէ
մօտիկի մը և մօտէջներու պարութա մը
կը ներկայացնէ :

Տիկինը շանոնք աչքէ անցունելէ ետ-
քը — Ասոնց ամենուն ալ մէջքերը հաստ
են, ես կուզեմ որ մէջքը բարակ ցուց-
նելու ձեռք մը ըլլայ :

— Ուրեմն ընտրեցէք սա ձեռք որ ձե-
զի լաւ կը յարմարի :

— Չէ՛, ես ան ձեռքին չհաւնեցայ . . .
սա ձեռք կ'ուզեմ :

— Բայց այդ ձեռք աւելի նիհարներու
կը յարմարի :

— Ուրեմն ո՛ւր մնաց ձեր վարպետու-
թիւնը, դուք պէտք է անակ ձեռք մը ը-
նէք, որ գիրուկները նիհար երևնան
(Մօտիկի զարմանք ուսերը թօթուէ) :

— Ինչո՞ւ կը զարմանաք :

— Որովհետեւ . . . տիկին, մենք գեր-
բնական զօրութիւն մը չունինք գիր-
ուկները նիհար ցուցնելու :

— Ատ ի՞նչ ոչինչ խօսքեր են . նա-
յեցէք, սա անցորդ տիկինը հազուադէպ
ձեռք ուրքտն լաւ է . խնդրեմ, գացէք
կանչեցէք որ աւելի մօտէն տեսնեմ :

— Ատիկա անկարելի է տիկին, մը-
նաց որ, անցորդ տիկինն ալ նիհարա-
կալմ է, մընչդեռ դուք . . .

— Բայց ես անոր ձեռքին հաւնեցայ և
կ'ուզեմ որ անանկ ընէք :

— Շատ աղէկ տիկին, անանկ կ'ընենք :

— Քանի՞ պիտի կարէք :

— 16 ֆրանք :

— Ո՛հ, ո՛րքան սուղ կը պահանջէք .
երկու օրուան մէջ լմնալիք գործի մը
համար 16 ֆրանք . . .

— Դժբաղդաբար չենք կրնար զեղչել :

— Լաւ, եթէ ուզածիս պէս կարեք, պիտի վճարեմ. ասկէց զատ, քանի որ մենք հիմա ձեռնէ առուտուր պիտի ընենք, պէտք է որ դուք ալ մեզմէ առուտուր ընէք:

— Ինչպէս . . .

— Երբ հիւանդանաք, դեղօրէից համար մեզի գիմելու էք:

— Աստուած չընէ որ հիւանդանաք տիկին. . . Ի՛նչ արտառոց առաջարկ:

— Բայց անկարելի է որ չի հիւանդանաք, մինչև իսկ եթէ պողպատէ ըլլաք, անշուշտ օր մը բժշկուելու պէտքը կունենաք:

Մօտիսթը զարմացմամբ տիկնոջ երեսը կը նայի, որ կը շարունակէ.

— Հայտէ, չափս առէք.

— Շատ աղէկ տիկին, առնենք:

— Մէջքիս հաստութիւնը ո՛րչափ է.

— 95 սանդղիմեդր:

— 25, այդչափ չեմ ուզեր. 70 սանդղիմեդրը աւելի ձեւաւոր կըլլայ.

— Եթէ սակայն ձեր մէջքը 70 սանդղիմեդրի ձեւը մտնելու կամքը ունենայ:

— Ոհ, դուք չափ առնել չէք գիտեր կոր. ես Պուքրէշ մօտիսթ մը ունէի, որ կըսէր թէ շատ ձեւաւոր մէջք մը ունիմ:

— Ծշմարիտ է, թերեւս այն ատեն նիհար էիք:

— 25, չէ: Մէջուրանիդ սխալ չըլլայ:

— Ամենեւին տիկին:

Չերկարենք, խել մը անտեղի առարկութիւններէ ետքը կերպասը կը կտրուի, երկու երեք օրէն փորձը կըլլայ, տիկինը շրջազգեստը կը հագնի, կը հաւնի և դրամը վճարելով կը մեկնի:

Օր մը վերջը տիկնոջ սպասուհին Մօտիսթին երթալով կրօնէ թէ, հիմա անմիջապէս տիկինը կ'ուզէ զինքը տեսնել, եթէ չի հնազանդի, մեծ վնասներ պիտի պատճառէ իրեն: Մօտիսթը արմանքէ զարմանքէ պաշարուած, կ'աճապարէ տիկնոջ ներկայանալ:

— Քիչ մը առաջ ասկէց կին մը անցաւ, իմ շրջազգեստիս նմանը հագած էր, որքա՛ն ալ աղւոր վայլած էր. ուստի կ'ուզեմ որ իմ նոր շինել տուած հագուստս ալ անոր պէս ընէք:

— Սակայն տիկին, այդ անկարելի է,

լմնցած հագուստին ձեւը չենք կրնար ըլլորովին փոխել. եթէ առաջուց ըսած ըլլայիք, ամենայն սիրով կընէինք:

— Անկարելի է մի ըսիք. . . Բայց եթէ չընէք, շատ վնասներ կունենաք. ես շատ բարեկամահիներ ունիմ, ամենուն ներկայութեանը ձեզ վար պիտի զարնեմ:

— Ես ալ զձեզ ձեր խղճին կը յանձնարարեմ:

— Խղճիս ձայնին կարեւորութիւն չեմ տար. ես ազնուաշուքուհի եմ:

— Բայց անիրաւ էք:

— Տեսնենք, ձեր խօսքին կը հաւատան թէ իմ խօսքիւ. ես ազնուաշուքուհի եմ:

Ու չափազանց բարկացած, հագուստը Մօտիսթի երեսին կը նետէ. այս վերջինն ալ ինքզինքը փողոց կը նետէ, վախնալով ո՛ր ծեծ մ'ալ չուտէ, և որ, տունէն բաւական տեղ հեռանալէ ետքն անգամ լոեր է տիկնոջ կրկնումները, «Ամենուն ալ վար պիտի զարնեմ ձեզ, ես ազնուաշուքուհի եմ. . . »:

ԱՅԲՕՅ

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱՒ. . .



(Շարունակութիւն)

— Կեցիր որ համոզուիս, պահ մը հաւատանք թէ սիֆտահ ըրած չըլլաս. բայց եթէ ստամոքսդ անարիղէ ընենք, մինչև ցարդ հոն տեսնուիս ըրած բիւնետով քօնեաքիդ մնաւան 140 բիւնետակաս չենք գտնիր. այսչափ խմով մը անպատճառ 40 բիւնետակաս ծանրութիւն պիտի ունենայ, մնաց 18 բիւնետակաս. ասոր ալ կըսենք կեղծելու ու խաբրըշխանութեան տուած: Հայտէ հրաման, տասնոցը տո՛ւր ու աճապարէ երթալ քօնեաք տնկելու:

— Օլտու օլաճագ, տասնոց մըն ալ դուն տուր որ, ճամբուս վրայի Նիքօլիէն 20նոց տան կրոյս մը տնկեմ:

— Կ'ուզես տան գլուխ տնկէ, կ'ուզես խաւթ գլուխ, ես անանկ բանի համար փայլ չեմ տար:

— Ուրեմն մնաք խաղաղութեամբ:

— Տէր ընդ ձեզ Տէր Քօննախ : Է՛ ճա-
նըմ, կէ՛լ գանձարա , կէ՛լ գանձարա :

— Սը՛սսդ . . . պարոններ , ճամբայ բա-
ցէք . . . մօնսիէօ Միգրերօֆը կուգայ :

— Պօնժուռ , ո՛վ է հիւանդներիդ .

— Կարծեմ սա խանձարին տէրը . . .

— Ի՛նչ կըսես ծօ՛ . . . ներեցէք տէր դար-
մանատար . հոս հիւանդ չի կայ .

— Հիւանդ չի կայ մի՛ . . . բայց ըսին թէ . . .

— Կ'երեի թէ թիւրիմացութեան և կամ
խաբէութեան պէս բան մը եղած է .

— Խարէութեան . . . և ի՛նչ համարձա-
կութեամբ .

— Անշուշտ այն համարձակութեամբ զոր
ըրին ֆիլիպէադորդ համբաւաւոր ննջեցեալի
խնդրոյն մէջ , այն ատեն դուք ձեր բոլոր գի-
տութիւնովը ու խելքովը խաբուեցաք , իրենց
զուռնան չալող կարգ մը կարծեցեալ տիբլօ-
մաթիքոսներէն . բայց հոգ չէ՛ , զի ո՛վ է մարդ
որ կեցցէ և ոչ մեղիցէ .

— Ատանկ բան կըլլայ՝ եղբայր , ինծի ը-
սին թէ հոս հիւանդ մը կայ և . . .

— Մի՛ պնդէք միւսիւ Միգրերօֆ , հոս հի-
ւանդ չի կայ . ահա կը տեսնես որ խանձար
մը կայ , որ պիտի կ'չնէ նաև վճեղ . ուստի հա-
ճեցէք նստիլ :

— Ներեցէք , ևս զբաղեալ մարդ եմ . ժա-
մանակ չի ներեր .

— Եղբայր , սա ալ վայրկեանի մը գործ
է . բազկերակ մը գննելու շտապ ատեն չի բը-
շեր . . . սանկ նստեցէք նայիմ . . . կեցցէք ,
ահա լմեցաւ . . . մի՛ երերաք . . . կբ բաշխմ
կոր . . . ճիշդ 35 քիօ .

— Հէ՛ . . . ի՛նչ ըսիր , աղէկ նայէ՛ .

— Դող մի՛ ելլէք . հիմա պիտի նայինք .
16 քիլօ կամակորական ծանրութիւններիդ , 14
քիլօ ալ ուրիշներու բմահաճոյքին համար ան-
գիտակցաբար գործիք ըլլալով հրապարակը ի-
րար անցունենուդ ծանրութիւնը . 2 քիլօ ալ
գաղափարական տակը դատարկ կարծիքներիդ ,
ըրաւ 32 . մնացորդ 3 քիլօն ալ ազդեցու-
թիւններնուդ ծանրութիւնն է որ ճիշդ կը հա-
ւասարի թաղական ընտրուելու համար ստա-
ցած բուէիդ : Հապօն , հիմա ազատ էք եր-
թալու . շատ շատ բարեւ խօսեցէք միւսիւ Ան-
թուանին եւ իւրայնոց , որոնք անշուշտ ա՛լ
խելքերին գլուխին ժողուած , այս միջոցիս
հանդարտ նստած են : Է՛ ճանըմ կէ՛լ գան-
ձարա՛ , կէ՛լ գանձարա . . .

— Պ . Բոթոթիկ , հեռագրատան ցրուելը

ձեր հասցէին հեռագիր մը բերեր է . կար-
դացէք :

— Հեռագիր մը՛ . . . ուրկէ՛ :

— Չենք գիտեր , ահաւասիկ , կարգացէք :

— ՔԱՍԵՆ գործ դադրեցուր և գանձարդ
առած Պուրկազ վազէ՛ : Ֆիլիպէի կ'չնէիքնե-
րուդ մնացորդը ետքն ալ կրնաս կ'չնէլ :

Այս հեռագրին վրայ երբ կը պատրաստուէի
գանձարը վերցնել , ահա միջահասակ մարդ
մը անոր մէջ նետուեցաւ . « Ինչդրեմ Պ . Բո-
թոթիկ . սօն ելլիքս պիտի ալ կ'չնէցէք , ը-
սելով :

— Բայց . . . դուք ո՛վ էք :

— Ես նուաստս եմ Բասկալօ-Բաղարձօֆ .
անուանեալն ֆառթ ֆուռթ , ամենապարզ խօ-
սակցութեանս մէջ իսկ խրոխտ և կիրքոտ . եմ
ի նոցանէ , որոնք երեսնից ժողովը ցրուեցին .
կ'ուզեմ գիկտատորաբար վարել ամեն խնդիր
ազգային . եմ նաև աստուած գիտութեան ,
զմայլելով զմայլիմ ի վերայ հանճարի կամ
բանջարի իմոյ . ու եթէ Բրիտանիա առաջ
ծնած ըրալի , Բրիտանիա մի պիտի ճանչ-
նային ինձի՛ : առայժմ հաստատուն գործ մը
չունիմ . վեր վար կը վազեմ . ուստի արժէքս
գիանալու համար կ'չուրիլ կուզեմ :

— Անանկ է նէ ոտքերնիդ գետնէն կը տ-
րեցէք .

— Կտրեցի .

(կ'չուրով) — Ա՛յ , սա ի՛նչ է , քիլօ մըն
ալ չես բաշեր կոր .

— Հէ՛ . ո՛րչափ պակաս եմ քիլօէն :

— Հազար կրամ .

— Ի՛նչ , հազար կրամ մի՛ . . . սա ո՛րչափ
ծանրաբեռնեալ եմ եղեր . . . թեթեւութեամբ :

— Հիմա հասկցաք ա՛րժէքներիդ , հան-
դարտ նստեցէք , ու ամէն բանի մէջ մի նե-
տուիք :

— Կեցիր Ծնոցդ տամ :

— Պէտք չէ . շէն կենաս . գոնէ կրամ մը
բաշելու էիր որ իրաւունք ունենայի դրամդ
առնելու : Եթէ քաւ բարով . . . հանդարտ կեցիր :

Այս ըսելէ ետքը , խանձարը առած՝ կա-
յարան վաղեցի , Պուրկազ իջնելու համար :

(Շարունակելի)

ՄԵՐ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ



ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՆԷՆ

ԵՐԱՇԽԱՐՈՒՄ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500.000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ.

1899 Յունիս	9ին	1500	Թիւեր.
" Յուլիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-31	16,000	"

Ամսաթիւ	Կէս	Քառորդ	Մէկ տըրդ.
Ա. Ամիս	5 փ.	2, 50 փ.	1, 25 փ.
Բ. "	8	4	2
Գ. "	10	5	2, 50
Դ. "	14	7	3, 50
Ե. "	12	6	3
Զ. "	8, 60	4, 30	2, 15
	115, 20	28, 80	14, 40

Գնելու և մանրամասն տեղեկութեանց համար պէտք է գիրով Սեդակաւոր Տիար ՍԱՐԳՍԻ ՊԱՐԳԵԻՆԷՆ, միակ գլխաւոր գործակալ տոյն պիտի պահանջուի քան, վառնա, Մուսալա:


Շրջակայ քաղաքներէն եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Ծ. Ս. կարգէն չի սկսող մը եթէ Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուղէ, պարտաւոր է առջի կարգերուն փոխարէնն ալ վճարել:

Отговорникъ М. Сконовъ
Печанница Взаимность — "Варна."

Մ. 2.

ԹՈԹՈՎՄՈՒՆՔ

Գողարիկ բանաստեղծութեանց սոյն հատորիկը կը վաճառի ի գին 25 սանդիմ, Ա. Զարպհանէլեանի գրատունը, Վառնա:



ԳՈՒՇԱԿ

Ա. ՊԱՐԳԵԻՆ

կամ Զուարճալի Բաղդադոյց ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատորի ծախքով չիմել խմբագրութեան:



ԵՐԿԱՐԱՐԸ

Կամ

ՄԵՂՔ Ե ԱՊԱՇԱՆԻ

Պոլսական կեանքէ քաղուած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.

Գրեց Տիրան Գ. Փափաղեան


Գին 60 սանդիմ: Գիմել խմբագրութեան:

ԸՆԴԱՐՁԱԿ

ՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԱԿԱՆ

կամ Հաւաքածոյ

Հին եւ նոր Ազգ. երգերու



208 էջերէ բաղկացած սոյն երգարանը կը ծախուի վառնա Ա. Զարպհանէլեանի գրատունը: Գինն է 2 ֆր. թղթատորի ծախքը գըրատան վրայ ըլլալով: Դրամի փոխարէն կ'ընդունուի Պուլկարական Գաղ. Գերմ. Անգղ. և Թրքական չի գործածուած նամակագրոյններ: